

Հարգելի գործընկեր



Ներկայումս **շնչառական բժշկությունը** (Respiratory Medicine, респираторная медицина) համարվում է կլինիկական բժշկության նոր ինքնուրույն ճյուղ, որն իր արմատներով սերտորեն կապված է կրիտիկական վիճակների բժշկության և թոքաբանության հետ:

Շնչառական բժշկության ուսումնասիրման առարկան է տարբեր ախտաձագման *շնչառական անբավարարությունն*, որը կարող է զարգանալ հիվանդի մոտ ցանկացած կլինիկական իրավիճակում: Հետևաբար, *շնչառական բժշկության* գիտելիքների ու մեթոդաբանության իմացությունը անհրաժեշտ է բոլոր բժիշկներին՝ անկախ մասնագիտությունից և առաջին հերթին՝ ինտենսիվ թերապիայի մասնագետներին, անեսթեզիոլոգներին, ռեանիմատոլոգներին և թոքաբաններին:

Մեր կարծիքով, այս սեմինարի անցկացումը կընդլայնի մեր մասնագետների հիմնարար գիտելիքները *շնչառական բժշկության* ոլորտում և կհարստացնի իրենց գործնական հմտությունների ու կարողությունների զինանոցը, ինչպես նաև կծառայի բժշկական կրթության ու բժշկագիտության զարգացման նպատակներին:

Հուսով ենք նաև, որ սեմինարի անցկացումը կնպաստի Երևանյան հոճակագրում (2012թ.) ներկայացված ապացուցողական բժշկության գաղափարների զարգացմանը:

Կազմկոմիտե

Անատոլի Զիլբեր (կենսագրական ակնարկ)



*Թող խոսքն ինչպես պղինձ զնգա,
Թող հավքն անթն վեր սլանա:
Լավ է մաշվել, քան ժանգոտվել,
Լավ է այրվել, քան թե ծխալ:
Անատոլի Զիլբեր*

բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՌԴ գիտության վաստակավոր գործիչ, Կարելիայի վաստակավոր բժիշկ, ՌԴ բարձրագույն կրթության վաստակավոր գործիչ, Կարելիայի գլխավոր անեսթեզիոլոգ-ռեանիմատոլոգ, Կարելիայի բժշկական էթիկայի կոմիտեի նախագահ, Ռուսաստանի անեսթեզիոլոգների և ռեանիմատոլոգների միության պատվավոր անդամ, Հարավարի և Հարավային Կալիֆորնիայի համալսարանների պրոֆեսոր:

1959 թ-ին Կարելիայի հանրապետական հիվանդանոցում ստեղծվեց ԽՍՀՄ ինտենսիվ թերապիայի, անեսթեզիայի և ռեանիմացիայի (ԻԹԱՌ) առաջին բաժանմունքը, որը նախատեսված էր կրիտիկական վիճակներում գտնվող հիվանդների սպասարկման համար: Նման բաժանմունքի ստեղծման գաղափարակիրը և առաջին վարիչը հանդիսացավ Անատոլի Զիլբերը, ով վիրաբուժական բաժանմունքի անեսթեզիոլոգների խումբը վերակազմավորեց ԻԹԱՌ բաժանմունքի:

1966 թ-ին ԻԹԱՌ-ը դարձավ ԽՍՀՄ բժշկական ինստիտուտների անեսթեզիոլոգիայի և ռեանիմատոլոգիայի առաջին ինքնուրույն ուսուցողական դասընթացի կլինիկական բազան:

Պրոֆեսոր Ա.Պ. Զիլբերը հեղինակ է ավելի քան 30 մենագրությունների, որոնք նվիրված են կրիտիկական վիճակների բժշկության կլինիկական, բարոյագիտական, փիլիսոփայական և իրավաբանական հարցերին: Բժիշկ, գիտնական, կազմակերպիչ, բժշկության լուսավորիչ և ջատագով Ա.Պ. Զիլբերը ձեռք է բերել համընդհանուր ճանաչում ոչ միայն Կարելիայում և Ռուսաստանում, այլ նաև դրանց սահմաններից դուրս:

Анатолий Петрович Зильбер (биографический очерк)



*Пусть белый стих звенит, как медь.
Пусть летят без крыльев птицы.
Стираться лучше, чем ржаветь,
Пылать почетней, чем дымиться.
Анатолий Зильбер*

доктор медицинских наук, профессор, заслуженный деятель науки РФ, заслуженный врач Карелии, заслуженный работник высшего образования РФ, главный анестезиолог-реаниматолог Карелии, председатель Республиканского комитета по медицинской этике, почетный член Федерации анестезиологов и реаниматологов России, профессор Гарвардского и Южно-Калифорнийского университетов.

В 1959 г. в Республиканской больнице Карелии было создано первое в СССР отделение интенсивной терапии, анестезии и реанимации (ИТАР), предназначенное для обслуживания всех, находящихся в критическом состоянии больных, независимо от этиологии. Идеологом создания такого отделения и его первым заведующим был Анатолий Петрович Зильбер, преобразовавший организованную им анестезиологическую группу хирургического отделения в отделение ИТАР.

В 1966 г. ИТАР стал клинической базой первого в медвузах СССР самостоятельного курса анестезиологии-реаниматологии.

Профессор А.П. Зильбер – организатор первого в России отделения интенсивной респираторной терапии (1989), затем респираторного центра (2001). Автор концепции медицины критических состояний (МКС).

Профессор А.П. Зильбер – автор более тридцати книг, посвященных этическим, философским, юридическим, клиничко-физиологическим вопросам медицины критических состояний. Врач, ученый, организатор, носитель и ревнитель медицинского просвещения – он снискал заслуженное признание не только в Карелии и России, но и далеко за ее пределами.

Սեմինարի գիտական ծրագիր

Հունիսի 18, երեքշաբթի

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան

11.00-13.00 Դասախոսություններ

1. Կրիտիկական վիճակների բժշկությունը որպես առողջապահության ոչ բնական բաժին:
2. Իմունաբանության ժամանակակից վիճակը՝ «խաղաղ» հեղափոխություն բժշկության ոլորտում:

Հունիսի 19, չորեքշաբթի

«Էրեբունի» բժշկական կենտրոն

15.00-17.00 Դասախոսություններ

1. Շնչառական անբավարարությունը որպես կրիտիկական վիճակների բժշկության բաղկացուցիչ մաս:
2. Թոքաբանություն թե՛ շնչառական բժշկություն:

Հունիսի 20, հինգշաբթի

Հանրապետական գիտաբժշկական գրադարան

16.00-18.00 Կլոր սեղան

1. Ժամանակակից բժշկական կրթության առավելություններն և թերությունները:
2. Գրադարանների դերը հումանիտար կրթության գործընթացում:

Научная программа семинара

18 июня, вторник

Ереванский государственный медицинский университет им. Мхитара Гераци

11.00-13.00 Лекции

1. Медицина критических состояний как противоестественный раздел здравоохранения.
2. Современное состояние иммунологии: “тихая” революция в медицине.

19 июня, среда

Медицинский центр “Эребуни”

15.00-17.00 Лекции

1. Дыхательная недостаточность как компонент медицины критических состояний.
2. Пульмонология или респираторная медицина?

20 июня, четверг

Республиканская научная медицинская библиотека

16.00-18.00 Круглый стол

1. Достоинства и дефекты современного медицинского образования.
2. Роль библиотек в процессе гуманитарного образования.



Հետադարձ կապ


Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարան
Հասցեն՝ Կորյունի 2, հեռ. (060) 621-221
Էլ. փոստ՝ science@ysmu.am

Հանրապետական գիտաբժշկական գրադարան
Հասցեն՝ Ռուբինյանց 29/3, հեռ. (010) 24-96-78
Էլ. փոստ՝ info@medlib.am

**ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ և ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան
Հանրապետական գիտաբժշկական գրադարան
Ապացուցողական բժշկության մասնագետների հայկական ասոցիացիա

**Գիտագործնական սեմինար
ՇՆՉԱՌԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԸ
УРОКИ РЕСПИРАТОРНОЙ МЕДИЦИНЫ
(Հունիսի 18-20, 2013թ.)**



Bis dat, qui cito dat

Երևան - 2013